Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

1486

491.99
Ч-41

1862

2002

# ՎԷՃ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

## ԲՈՂՈՔ

Յ· Զ· ԵՒ Ծ· ՏԱՌԻՑ

ԸՆԴԴԷՄ

Ս ՏԱՌԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՃԷՐԻՏԷՑԻ ՀԱՎԱՏԻՍ

1862

491.99
Կ-41

57

12215

Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна

793
34

491.99
Վ-41

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Չեռքերնիս աս մօտ օրերը հետաքրքրական գրուածք մը անցնելով, կը փութամք զայն յօժարամիտ սրտիւ տպագրել 'ի տեղեկութիւն բանասիրաց: Սակայն կարեւոր կը համարիմք հիմակուընէ ծանուցանել ամենուն, որ աս գրուածս հրատարակելով, նպատակնիս մէկու մը դպչիլ, կամ բնաւ մէկը նախատել չէ, այլ, որպէս զի սստանկ վարպետութեամբ յօրինուած երգիծաբանական խրատաբանութիւն մը տը-պագրութեամբ կենդանի պահուելով, ըլլայ օրինակ զգուշութեան ներկայից և ապագայից որով ամենայն Հայ լեզու մասնաւոր փոյթ մը ունենայ ուղիղ առոգանութեան և արտասանութեան, և ահա աս եղած պիտոր ըլլայ թէ անծանօթ բանաստեղծ Հեղինակին վախճանը, և թէ տպագրողիս միակ նպատակը, ինչպէս որ Ովրատիոսին, իր ընտիր ու գեղեցիկ խրատական Երգիծաբանութեանցը մէջ:

# ՎԷՃ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ

## ԲՈՂՈՔ

## Ց. Ձ. ԵՒ Ծ. ՏԱՌԻՑ ԸՆԴԴԷՄ Մ ՏԱՌԻՆ

### ԲԵՄ

Բողոք բարձին տառք Մեսրոպայ,
Երեք սոքին Ց. Ձ. և Ծ.
Գումարեցին կաճառք գիտնոց,
'Ի բեմ դատիս դոռ հակակայ:

### Ծ. Ց. և Ձ.

Ըշերամգիր եռուն սոքա,
Քերթողահօրն Մեսրոպայ,
Դատ արա մեզ Մէ յասոխէն,
Որ զմեզ զրկէ 'ի Գաղատիա:

### Ծ.

Ուր կորուլի հնչիմ ես ծա,
Ըրտասանեն մեղի յԸնկլուբիա:

### Ց.

Ես ցօ հուժկու տկարացայ,
Զի խօթ անկայ 'ի Գաղատիա:

### Ձ.

Եւ ես տիկին յորջորջիմ ձա,
Նաժիշտ եղէ նուաստացայ:

### Ց. և Ձ.

Զմեզ կեղեքէ աէ հարկահան,
Յերկուց ի' մէնջ կատպեալ զձայն,
Համատարած Թագաւորէ,
Մեք բողոքեմք 'ի քո ատեան:

Մեսրովպ վարդապետ.

Մէ՛ անիրաւ մի՛ ըստ քո սահման ,
Աշխուր հնչեր արձակաձայն ,
'ի ծայր լեզուի զքեզ 'ի կոճեղ ,
'ի դիպահոջ բանդէմ բերան :

Ա.

Ես օն և օն ոչինչ մեղայ ·
Թող կոչեսցեն զդա վկայ :

Յ. և Զ.

Կաշառարեկ համախորհուրդ ,
'ի բաց կաց դու բաժանորդ դա ,
Օվ գող գողոյն ես գողակից ,
Աւար առնալ զքոյր մեր ծա :

Յ. Ծ. և Զ.

Քերթողահայր մեք երեքեան ,
Կամք զետնամած քո յանդիման ,
Քեզ ցուցանեմք ոէ անիրաւ ,
Առաջարկեալ փաստ բանական :

Զ.

Զէթ հեղանիւթ յոր ես օծայ ,
Մէ զնա որդի եդ Ադամայ ,
Մէ շաղակրատ տառապելէ ,
Յերկնից տեղալ սեւն Անկիւրիա :

Յ.

Յան արմտեաց յիս հաւկ առոք ,
Մէ կնքահօր սան առնէ զնա :

Ծ.

Ծունկն յինէն ապստամբի,
Զդա զգեցեալ զունկն լինի.
Զսրունս թողեալ ողորմելի,
Մերձ առ գլխով տաղաւարի:

Ծ.

Ծով լայնատարր ձոխ և փարթամ,
Ուր կետք լողան ձուկք համադամ,
Մէիւ լսի քաղց սոխակլուկ,
Աշխարհաւեր համակործան:

Յ. Չ. և Ծ.

Ահա քեզ ցոյց անժխտելի,
Քերթողահայր ներհուն արհի,
Այս տարաձայն թիւր իմաստից,
Մէ չարագլուխ պարտուորի:

Մեսրովպ վարդապետ.

Պապանձեցար սէ անիրաւ,
Զմարդկան լեզու առեալ 'ի գրաւ,
Հագարացւոց քքովք ծանուք,
Զքեզ խրատեմ դաւաղանաւ,
Կոչեա զդա կաշառաբեկ,
Վկայ հաղորդ քոյդ դողութեան:

Զ.

'Ի զուձս անկեալ դա ձեռնամած,
Դատաւորին հանդէպ եկաց,

Մեսրովպ վարդապետ.

Ա՜յ չարագլուխ յետին նախդրաց,
Դու նախատինք բայից անուանց,
Զարահնչիւն և խանգարիչ,
Վրէժ տայցես կրկին չարեաց:

## Զ.

Այո՛ այո՛ ես պարտական ,
Տէր դատաւոր քոյին ցասման ,
Այլ զի՞նչ տաց քեզ պատասխանի ,
Գանդանաւանդ կայ յիմ բերան ,
Եթէ խօսիլ իցէ արժան ,
Դատ լինիմ ես բացեալ զբերան ,
Թող լռեսցեն տառք երեքեան ,
Գաղատացիք են պարտական :

## Դատն խրատէ զԶա .

Մի՛ մի՛ քոյր զա մի՛ լինիր զատ ,
Զի և իմ կայ բողոք և դատ ,
Մի նմանիր բաց բերանոյս ,
Հերիք ցայսօր կացի ես կատ :

## Ա . Զ . Յ . Ծ . տառք հնչեքին .

Համախորհուրդ աստ դումարին ,
Համպա եղբարք տառք զուգաձայն ,
Ո՞ն զիմեսցուք յաղերս յատեան ,
Արդար վճիռ խնդրել չարեաց ,
Յորոց զրկիմք միաբերան ,
Աղերսագիր տացուք ապա ,
Քերթողահօրն Մեսրոպայ :

## Ա . Զ . Յ . Ձ . և Ծ .

Եթէ դատք քո առաջի ,
Շնորհ հաճութեան կալ յատենի ,
Մի՛ զլասցի մեզ հրաման ,
Տող սուղ հակիրճ ասել բեմիդ .
Զի զմեր ծածուկ խորհուրդ սրտի ,
Ետ մերկանամք քո առաջի :
Մեք շնորհազիծ քոյին մատանց ,
Զուտ դաղափար սուրբ տախտակաց ,

Եւ ձեռնաուն հլու հպատակ,
Աւանդելոյ որոշ ընչմանց :
Այլ զայս փուրշիշ 'ի քո առեան ,
Համախմբեն ազգ Թոյլեբրան ,
Թէ զԱսորուոց գիր սոցա տաս ,
Փոյթ խաղաղի մեր վէճ ընչման :

Հայկ Թորգոմայ ·

Ողբամ զքեզ ազգ ցիրուցան ,
Կէս մի 'ի Պոնտոս կէս Հնդկաստան ,
Կէս զլեզուն աղաւաղեալ ,
Զայն վաղեմին դիւցազնական :
Մի' մի' խորէք յիմ զաւակաց ,
Յիմոյ ցեղի բարունակաց ,
Մի զոր ճեան Թիւրանչիւն ,
Փուք Ասորոց մատնէք ժանեաց :

Մեսրովպ ·

Մի' լար մի' լար Հայր պատուական ,
Զի ակն առեալ քոյդ մեծութեան ,
Ոչ մեղանչեմք քոց զաւակաց ,
Նեբրովթածնաց տալ վրէժ արեան ,
Թող զայս սահման ընչեն անվրէպ ,
Զի մի լիցի ինչ տարադէպ ·
ԾՕՐՄԻՐԱԾԻՆ ԿԱՅԾ ԳՈՂՈՐՇԵԱՑ,
ԼՈՒՍԱՑՆՑՈՒԳ ՓՐՑԼ ԱՏԱԿԵԱՑ,
Ապա թէ ոչ սուր Գաղադու ,
Մերկ հոլանի կայ վրիժառու ,
Մանգաղ ընձէ արմատաքի ,
Զազգ սօսսաց խոտորնակի ,
Անաշխարհիկ Թափառական ,
Գիշերապահք զնա կալան :

Գիշերապահք ·

Ուստի' գաս դու կամ յո' երթաս ,
Զի'նչ կեանք է քո զի'նչ հայրենեաց ,

Գաղատացին.

Իմ հայրենիք է Նախջուան,
Ես արհեստիւ վաճառական,
Պանդուխտ էի 'ի Հնդկաստան,
Ուստի դառնամ անունս Յոհան:

Գիշերապահք.

Բարեաւ բարեաւ պարոն Յոհան,
Ըռ զմագաղաթ ընթերցիր զհրաման:

Յոհան յայլ յայլմէ նշեալ թէ զի՞նչ թուղթ իցէ այն ձեռն կարկառէ, 'ի գրապանս զգեստու իւրոյ. առնու զակնոցն, զեանդէ յուշի ուշով եւս աղաղս դատանել արտասանութեան տառիցս երեցունց Յ. Ծ. և Զ. յորոց համօղեալ զանձն թէ դուցէ ոչ ընդ առաջ ելցեն, էառ զքարտէսն մագաղաթեայ 'ի ձեռին, և տիգօք աչաց հայեցեալ, թէպէտ խռովեցաւ յանձն իւր տեսեալ զթուղթն լի դժուարահնչիւն խնքեան տառիւքն երեքումք, այլ զի մի կարծիս զանձնէ տացէ գիշերապահացն կասկածելոյ, քաջալերէ զանձն, ցամաքեցուցանէ զլորձունս բերանոյն, պնդէ զատամունս, ձգտէ զլեզուն, և յարեաւ ընթեռնուլ:

ՕՕՐՄՐԱՕՐՆ ԿԱՑՕ ԴՈՒՇՐԱԿԱՆ’ ԼՈՒՍԱՒՆՈՒԿ ՓՐՑԼԱՏՍԿԱՍ:

Յայնժամ լի եղև բարկութեամբ կուսակալն իշխանապետ գիշերապահ զօրականին, և այլագունեալ անկան երեսք նորա, հրամայեաց թիկնապահ կապարճակրին բառնալ զնա փութանակի տալ և երդնլոյ 'ի բանտ մինչև ցառաւօտ, ուր գետնախշտի կացեալ ողորմելին հող զգլխով լինէր, հանէր զգիշերն

գայն ողջոյն յողը անմխիթար , աշխարհելով զաղէտս վտանկի իւրոյ 'ի տարաշխարհիկ օտարութեան : Եւ իբրև այդ զխիչերն մերկանայր , նստեալ իշխանապէտն յատենի հրամայեաց ածել զմեղապարտն զառաջեաւ , որ եկն եկաց դողալով յանդիման , և քիրտն ցրտագոյն ընթանայր ընդ իրան մարմնոյն համատարած , տուր և առ շնչոյն նուաղեալ հագագ բերանոյն պակասէր , դողդոջուն ծնգովք հազիւ յոտին կայր , դէտակն ունէր դատակրնիք վճռոյն եղերական օրհասիւ թողուլ ընդ կենացն և զտագնապ մահու : Ընդ էր տեսանել աչեղ իմն տեսարան զարհուրելի , լռութիւն իմն թագաւորէր անտանօր խոր և ընդերկար , շշուկ և եթ խորհրդականաց լսելի լինէր 'ի մերձակայ վայր ժողովարանի , ուր համախմբեալ ծերունեացն ատենակալաց խորհուրդ 'ի մէջ առնուին , թէ որո՞վ մահուամբ դատեսցեն զմեղապարտն , որք և հրամանաւ իշխանապէտին կոչեցան յատեան , և հրամայեցաւ նոցա ունել զիւրեանց տեղի , իւրաքանչիւր ըստ պատուոյ աստիճանի : Եւ իբրև այսպէս կարգեցան զետեղեցան մի ըստ միոջէ , յայնժամ հայեցաւ իշխանապետն 'ի Յովհան զայրագին , և շանթք բոցոյ հատանէին յաչաց նորա , ասէ

Ով չարագլուխ դու վատ արանց ,
Սուտակապաս և սօսասաց ,
Ընդ զոկանաց լուծցես զվրէժ ,
Յ . Զ . եւ Ծ . խեղճ լծորդաց :

Յայնժամ ակնարկի արար իշխանապետն զենակրին , և ասէ . արի պատահեա դմա , և նա խոյոյն մերկեալ զսուսերն 'ի պատենից , որ կախեալ կայր թերաքամ զաղդերէն , եհար

զպարանոց նորա սուսերաւն բերանացի միանգամ, և այլ ոչ յաւել. և անկանէր մեղապարտն առ երկին դիտապաստ: Եւ արիւնն լուանայր զյատակս սրահի ապարանիցն: Եւ լուեալ հայրենակցացն փութադեսպանս յղէին առ իշխանապետն արս արշիճեցիս թուով եօթն խնդրել զմարմինն Յովհաննու, գանձս տուեալ հրեշտակացն տանել ոսկի և արծաթ զկշիռ մարմնոյն, զոր առեալ թաղեցին զնա շքով մեծաւ 'ի շիրիմս հարց իւրոց, և կոծեցին զնա ամենայն ազգ Գաղատիոյ զաւուրս եօթն:

Գլուխնիդ ողջ կենայ,
Աշորմիս տուք ճանընայ:

# ՅԵՒԵԼՈՒԱԾ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ

### Առ գերապատիւ Մեսրովպ Վարդապետ

Քանզի օրէնք են բնութեան, յարարչա-
պետէն 'ի մարդիկ հաստեալ իմաստութեամբ
զզայարանացն իւրաքանչիւր յիւրեանցն առըն-
րիլ յառարկայն հաւասար. որպէս տեսանե-
լիք 'ի լուսաւորն գունաւոր. ճաշակելիք յոր'ի
քիմսն ընծային իբրեւ 'ի փորձաքար հոտոտել-
եացն ձիր ընդ օդոյ յինքեանս ձգել զհոտ, անու-
շիցըն հեռեւել, 'ի գարշելեաց 'ի բաց խորշիլ,
շօշափականն մասն հասարակաց ապաքէն ծա-
ռայէ զգայութեանց հաւասար. սակայն իւրն
ընդարբոյս 'ի փափուկսն գիտեմք բերել կա-
մակար, այլ որ 'ի սոսա առաւելեալ գտանի
ճարտարութեամբ ըստ իս, եթէ ոչ վրիպիմ.
է երկրորդն ըստ կարգի, զլսելեացն ասեմ
հաստարան. որ սքանչելարուեստ թնքեալ մոր-
թովք իբրեւ զգալարափող 'ի բացուստ անտի ըզ
ներդաշնակութիւն ձայնից յինքն առձգէ.
տիրականին մնաց պատգամարան. առաւել
գիրգ բնութեան կամ յատկութեան վիճակ-
եալ առաւել խնամոց պետս ունել զսա խոս-
տովանին ամենեքին աներկբայաբար. զի տե-
սանելիք շաղկապեալք ընդ գագաթան երակաց
հաղորդութեամբք արագ զտեսողականն ըն-
դունին շառաւիղ, հետաքնին բարուց դիպեալ
մահկանացուաց բարեբաղդութեամբ. իւր զօ-
րավիգն առընկալաւ զմեքենայն ճարտարեալ
հեռացոյց կամ ըստ մերձեկայից խոշորացոյց.
հոտոտելիք թմրեալք ազգի ազգի ոգեաց հե-
ղանիւթից զօրութեամբ զարթնուն 'ի գոր-

ծողութիւնս իւրեանց․ քիմք համադամ խորտ-
կաց պատրաստութեան հանգիպեալ հոլովեն
զիւրեանց աղօրիս․ իսկ լսելեաց գործարան
անբաժ գտեալ յայս ամենայն հնարից օգ-
նականութենէ ոքնին անդադար յիւրեացն
առընդունիլ պտոյտ Լափիւրինդոսական զձայ-
նից յարմարութիւն ստեղծականաց․ ողորմելի
լսելիք․ սոցա անիրաւին, ասեմ, որք միան-
գամ աղաւաղ բնաւորեալ են առոգանու-
թեան․ տարապարտ ծառայեցուցեալ զնոսին 'ի
կրել զձայն 'ի սենեակ իմաստից խորհրդարանի,
անբաղաղոյգ գտեալ թել իմաստից հարկին սո-
քա միւսանգամ հենուլ զիւրեանցն գործած․
ժամ է այսուհետեւ, ո՛ արդարակորով դատա-
ւորաց պետ, ժա՛մ է քոյին անաչառ արդա-
րութեան, ժա՛մ մանրախոյզ քննողութեամբ
յերեւան ածել զմեղապարտն անիրաւ․ ունկն
դնել բողոքման զրկելոյն, զոր մեք ինքնին 'ի
վերջնումս ժամանակի 'նախանձու վառեալ
արդարութեան յանձն առաք զլուծ ծանրա-
բեռն պաշտման, կալ հանդիսիւ զրկելոց փաս-
տաբան․ մատուցանել զնոցին դատ եւ զբողոք
յարդարադատ քոյին յատեան․ ուր 'ի ներո-
ղամիտ գթութիւն եղեալ ապաստան Ց․ Զ․ եւ
Ծ․ տառքս աղերսարկու մատչին խոնարհու-
թեամբ խնդրել զվրէժ իւրեանց զրկանաց 'ի
թուլամորթ շրթանց աղաւաղիչ առոգանո-
ղաց։

## Մեկնութիւն Վարդապետին

Ա․ Վէճ դատաստանական․ ցուցանէ
զհակաճառութիւն ղօրինօք եղեալ, փաստիւք
ցուցեալ եւ վկայիւք հաստատեալ, եւ ոչ վէճ
խռովութեան, կամ կռուի։

Բ․ Զիշխանական հեղինակութիւն եւ ընդ-
ներկայութիւն դատաւորին ցուցանէ ըստ որում

այնպիսի կամ յիւրում պաշտաման :

Գ. Բողոքն է դիմումն առ գերագոյն ատեան անկախ :

Գ. Եղերագիր . ռամկ . արզուհալ . իբր յայտարարութիւն վիճակի . զի արտ յարաբական լեզու , ուստի առեալ է բառս առաջարկել , և հալն վիճակ . այսինքն առարկումն վիճակի առ 'ի գութ և կարեկցութիւն շարժելոյ զիշխանական հեղինակութիւն ընդ վիշտ և կարիս անմեղաց իւրաքանչիւր :

Գ. Մէ . սփ սոփ . Յ . և Զ տառից զի վեճն 'ի վերին երեսս է ընդ Նմա , զորմէ դանկատեն թէ զրկէ զնոսա 'ի Գաղատիա . զի Գաղատացիք յարտասանելն զբառսն որ ունին Յ . և Զ . ըստ իւրեանց , մեղկաշուրթն առոգանութեան բառք բազում անգամ օտարանան 'ի նշանակութենէ իւրեանց . որպէս յայտ է յօրինակն բերեալ 'ի ձիւն , Իտալերէն , Նէվէ . տճ , գառ , արտասանեալ սէխ նշանակէ սիւն . իտա , քօլօննա . տճ , տիրէկ . վասն որոյ ասեն ս տառն իբր թէ զրկեալ զձա կապտեալ 'ի նմանէ զձիւն նէվէ և ինքեամբ սիւն կազմակերպեալ , քօլօննա . սոյնպէս և այլք բազումք . թէպէտ այս ոչ եթէ տառից է մեղ . այլ անընտել արտասանութեան դիւրագայթ լեզուաց գաւառայնոց ոմանց , այլ հեղինակն Նուրբ կշտամբանօք տառից ընդ միմեանս վիճելոյ զանուղղայ լեզուս Գաղատացւոց յանդիմանէ . ոչ 'ի խրատ ուղղութեան ապաքէն որ է անյուսալի , զի առարկայ յուսոյ է կարելին . այլ 'ի զուարճութիւն ընթերցանելեաց և եթ . թէատրոն յարդարեալ տառից 'ի քարտէս յախորժ հաճութիւն քմաց բանասիրաց զիւրն ընծայեալ զերկասիրութիւն , դարձցուք 'ի կարգ մեկնութեանս :

Գ. Ցօ հուժկու յարանուանեալ 'ի զօ-

ընդ արտասանութենէ նորմէ . ասի խօթանալ 'ի մեղկացի երակաց Գաղատացւոց արտասանելըն , սօ՛ . այնպէս և կորովին ծա՛ գանկատէ , և ձ գեղեցիկ նուրբ և վայելուչ ձայնիւ տրտգանութեան տրկնաց տինկին երևեալ' առ Գաղատացւովք նաժիշտ տեսեալ զանձն ցաւալինըս գանկատէ ասելով նուաստացայ իբր անկայ յաթոռոյ . տուժեցայ զթագ և զաւազան զարքունի . բա՞րէ և որ սիրտ պղնձալի ժուժէ բերել անիրաւութեանս :

Ե . Մէ . Հարկահան - իբր զի յանիրաւի բըռնացեալ իբր հարկ պահանջէ 'ի Յ . և Ծ . տառից զնշանակութիւն իւրաց և անուանց որ նոցա պատկանէ . որպէս 'ի զըկելն զձա 'ի բառս ձեթ . օլիօ զէյթ . ինքն եկեալ փոխանակ նորա նշանակէ Մէթ որդին Ըգամայ էն . ո՛չ կարացեալ այնուհետև ժոյժ ունել բռնութեան անիրաւ սէյին Յ . և Զ . գոչեն առ Սեբովպ դատաւոր մեք բողոքեմք 'ի քո յատեան . ուր նա պարտաւորի 'ի սիրոյ և յարդարութենէ . ըստ որում 'ի պաշտօնէ դատ առնել զըկելոց . այլ զի մի՛ գործ կրից և բարկութեան երևեցուցէ յանձին անվայել իւրում իշխանական վեհափառութեան խոհեմութեամբ կոչէ զսէ առ իւր . և քաղցրութեամբ յանդիմանէ մի այլուր 'ի բերանի բայց եթէ 'ի ծայր լեզուի հաստել իւր օթարան . որպէս փորձն ցուցանէ յարտասանելդ սէ . և նա առ այս կշտամբանս 'ի չքմեղս եղեալ և ցասուցեալ . վասնորոյ յանիրաւի զրպարտի և ամբաստանի երդմամբ և վկայիւք ջանաձար լինի արդարացուցանել զանձն . օ՛ն և օ՛ն ասէ ոչինչ մեղայ . զզա կոչէ 'ի վկայ . զիւր դողակից . զի որպէս սէ զըկէ և յափշտակէ 'ի Յ և Զ տառից նոյնպէս և զա . 'ի ծա տառէն որպէս յասելն ծունկն . ճինօքքիօ . զաիւ լինի զունկն օրէք-

քիօ․ այլ սակայն Ս․ և Յ․ տառքն աչալուրջ և զգաստ․ իսկոյն իսկոյն 'ի վերայ հասեալ խորամանկ դաւանացն յանդիմանէին զհաղբոն չարին և 'ի բաց մերժէին զանիրաւ վկայն․ որ յահեղ ձայնէ կրկին նահատակաց ցոյի և ձայի, շուարեալ ոչ գիտէր ընդ որ փախչիլ․ և այսպէս հալածեցաւ չև ողջունեալ զսեամս ապարանից դատաւորին ։

Անդ զամօթի հարեալ Յ․ և Զ․ վասն անվայել աղաղակին և բարկութեան զոր ցուցին առ Ջ․ տառն որ եկեալն էր լինել վկայ․ յառաջիկայութեան դատաւորին անվայել համարձակութեամբ 'ի բաց վանելով․ ողջունեալ զաստիճան պատուանդանի աթոռոյն հրաժարին 'ի բաց ։ և այգուցն առաւօտուն առեալ ընդ իւրեանս զքոյրն իւրեանց Ծա, գան 'ի դուռն ապարանից․ և ընկալեալ հրաման մտից, մատչին 'ի համբոյր գարշապարաց դատաւորին ասելով մեղմ և գաղտն ձայնիւ․

Քերթողահայր մեք երկքեան եմք․ որ 'ի կարգի, առաջարկեալ փաստ բանական ։

Արդ՝ որովհետև ո՛չ ընկալան զդա 'ի վկայ և առանց վկայից ոչ հաստատի բան ամեն․ թէպէտ մեք ոչ ընկալաք զվկայն զի էր անիրաւ․ սակայն առաջի առնեմք գերագոյն բեմի քոյին փաստս զօրաւորս որ ցուցանէ զանիրաւութիւն սէյի առաւել քան թէ բիւրուք վկայիւք․ Զ․ ձէթ հեղանիւթ են․ որպէս 'ի վեր անդր բացատրեցաք ։ Ահա Տէր դատաւոր այս ամենայն խանգարմանց սէ չարագլուխ է սկիզբն և պատճառք․ յայնժամ Մեսրովպ վարդապետ ցասուցեալ կոչէ զսէ անիրաւ․ կոչէ և զդա միանգամայն հաղորդ անիրաւութեան սէյին ։

Ջ․ 'ի գուճս անկեալ զդա ձեռնամած․ 'ի ձեւոյն առեալ, զի ձև զդա գրոյն իբրև 'ի գուճս իջեալ․ հանդէպ եկաց դատաւորին շողոքորթ

քանիւ զիջուցանել զցասումն դատաւորին . նախ յանձն առնու զմտսապարտութիւն , ապա 'ի կամիլ արդարացուցանել զանձն , ասէ արգիլ-եալ լինիլ 'ի սանձէ այսինքն 'ի գծէ զոր ունի 'ի բերանի , Զ թէպէտ ասէ : զուր դատիմ կշտամբ-եալ , այլ առ դժբաղդութեան հարկիմ յա-կամայս համբուրել զլռութիւն սանձ ունելով 'ի բերանի իմում . այլ առ չզօրելոյ համբերել և Ես խորհիմ լինել զատ , 'ի բաց դնելով զլիծն 'ի բերանոյ իմոյ . զի կարացից անբասիր կա-ցուցանել զանձն . զայս լուեալ եղբայրասէրն զատ փութայ խրատել զնա . մի՛ մի՛ ասէ . մի՛ քոյր իմ մի՛ սիրելի ձևակից իմ մի՛ լինէր զատ . կարծես լինելովդ զատ հանգիստ գտանել . խա-բիս խաբիս . զի իմ աղէտք քան զքոյդ դժնդա-կագոյն . զի և ես ունիմ բողոքել . մնամ ելից զատի ձերոյ զի զիմս առաջարկեցից . զի և զիս արտասանեն կատ ըստ այնմ . սրբոյ աւետա-րանիս ըստ Ղուկասու :

Յայնժամ Ա. Զ. Յ, Չ, Ծ համախորհուրդ-հաւանութեամբ մատուցանեն , զիւրեանց առա-ջարկութիւն առ սուրբն Ներսէսը . մեք , ասեն . քո շնորհագիծ մատանցդ գծեալք . կամք անըս-տերիւր 'ի կոպար սահմանի հնչման . զոր մեղ-օրինագրեցեր , այլ զայս ամենայն կազս հակա-ճառութեան յուզեն թոյլերան զաղատացիք . եթէ տացես սոցա դիր զՆօրուց , մեզ փոյթ այնուհետև վճարի զատ :

Յայս խնդիր սոցից 'ի վերայհասեալ Սե-րովպ վարդապետ հայրաբար արտասուէ զա-զէաս որդեկացն խիթացեալ զի մի ճարակ լի-ցին սրոյ աերնդոցն ներբովլեթայ 'ի խնդրել 'ի նոցանէ զարին հաւուն իւրեանց զոր մահացոյ-ցին երբեմն կորովին Հայկ յիւրումն լայնալիճ աղեղան . որում ակն ածեալ ալեաց բարեխառ-ծերունւոյն յայլ իմն հնար եղեն ձեռնարկու

սահման բառից յարդարեալ յարտասանութիւն կոպտ պայմանի որպէս երբեմն 'ի Հնումըն Գաղատ զեւրն չիպպօլէթ. ապա թէ ոչ մահուամբն լուծցեն զվրէժ վասպարտութեան. և սահմանն՝ էջայս.

## ԾԱՄՐԱԾԻՆ ԿԱՅԾ ԳՈՄՈՐՇԵԱՑ ԼՈՒՍԱՑԴՑՈՒԳ. ՓԱՅԼԱՏԵԿԵԱՑ

Համայն բաղկացեալ 'ի տառից որ անընտել արտասանութեան օտարախորթ լեզուագարացն գաղատացւոց, որով խոկոյն նշաւակին եթէ ծպեալ կերպարանօք գաղտագողի ուրեք շրջեցին, և զայս անցուցեալ 'ի գիր յանձնեցին գիշերապահ զօրականաց ոմանց յայս սակս կարգելոց իբրև ճշգրիտ և անվրէպ փորձաքար. զո՛ր 'ի տախտակ պղնձի փորագրեալ սաւանձնեալ նոցին շրջէին ընքուն փոխանակաւ, որոց անակնկալ դիպեալ մատաբաղդիկ օտարականի ձերբակալ արարին, և շուրջ ակումբառեալ հարցանէին ըստ իւրեանցն պարտուց պաշտաման. Ո՛ւստի գաս դու կամ յո՛ երթաս և որ 'ի կարգի: Իսկ նա 'ի վերջնումն զվերջնոց բուռըն հարեալ մտացածին հնարիւք խորհէր թափել 'ի նոցանէ զանձն 'ի բաց, արար պատասխանի հարցմանց հակիրճ բանիւք և բառիւք յոր ոչ ընդմտանէին տառքն երիքեան. կարծելով իմն թէ այնու ազատեսցի, ասէ. իմ հայրենիքէ Նախջուան է:

Իսկ նոքա զինուորական իմն վեհանձնութեամբ ողջունեալ զնա առաջարկեցին նմա զսահման և յետ այնորիկ այն անցք անցին ընդ ողորմելին ըստ որում խորամանկն 'ի խորագիտութեան իւրում ըմբռնեսցի. այս պատիժ է այնոցիկ որ անկրաւէին 'ի տառս. “Խորագիտին տեսեալ զչարագործն պատժեալ հաստատութեամբ խրատէ զանձն:”

2013 1486
ՀՀ Ազգային գրադարան
NL0061808